

Ա. Ղառիբյան

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀՈԼՈՎՄԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՐԿՈՒ ՆԵՐՔԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Հայերեն լեզվի անվանական հոլովման ներքին օրենքների հարցը չուժեկու համար անհրաժեշտ է նախ լեզվաբաններն որոշել նրա սխառմը, բնորոշել ձևույթները, որպեսզի հնարավոր դառնա համեմատություն մեջ դնել նախնական վիճակի հետ և երևան բերել դարգացման պրոցեսը:

Ինչպես գիտենք, հայերենի քերականության հարցերը որոշելիս՝ հայ և օտար լեզվաբանները առաջնորդվել են հունարենի և լատիներենի օրինակով և մեր քերականությունը ձևել են այդ լեզուների քերականության վրա: Երկու լեզվաբանների՝ Ա. Բագրատունուն և Հ. Աճառյանին, հաջողվել է հայերենը դիտել իրեն ինքնուրույն կառուցվածքի լեզու և կոտակել նրա սխառմի էությունը: Մենք գետ 1937 թ., ապա 1946 թ. մի առանձին հոդվածում, փորձեցինք հայերենի անվանական հոլովումը նկարագրել դասական լեզուների քերականության սխառմից անկախ, բնութենելով հայերեն լեզվի մեջ ներքին և արտաքին ինքնուրույն բնույթներ, որպես նրա անվանական հոլովման սխառմի ելակետ:

Այդ սխառմից ելնելով մենք ստանում ենք գրաբարի անվանական հոլովման հետևյալ պատկերը (տես՝ հաջորդ էջում):

Երևելով չիշյալ աշյուսակա՝ նկատում ենք գրաբարի անվանական հոլովման, հետևյալ առանձնահատկությունները:

1. Գրաբարի բառերը ձևաբանորեն անվան կատեգորիան արտահայտող սրեկ հատկանիշ ուղղական հոլովում չունեն, ուրեմն՝ նրանց ձևաբանական կազմությունը պարզ է:

Մյուս հոլովներում նկատում ենք բառի բազալընթաց կազմություն, բայց որում ուղղական ձևի վրա ավելանում են երկու սոր հատկանիշներ, երկու մասնիկներ, որոնք միմյանց հետ կապված չեն: Այդ բառի լավ երևում է գործիական հոլովում, որտեղ Արշակաւ, տատեղր, գնալով ձևերի մեջ նկատում ենք բառավերջի շրթնային կամ շրթնալիզվային Վ, փ, ք հնչյուններից որևէ մեկը: Այդ երեք հնչյունները միևնույն ծագումն ունեն: Ըստ գրաբարի հնչյունական օրենքի Վ, փ, ք հնչյուններից հետո չի կարող լինել վ, այլ կարող է լինել միայն Վ, ինչպես որ գտնում ենք սրտիւ, Արշաւաւ բառերի մեջ: Ըստ նույն օրենքի գրաբարում Վ-ից հետո չի կարող լինել Վ, այլ միայն վ, ինչպես որ այդ գտնում ենք գնալով բառի մեջ: Եվ վերջապես, գրաբարի հնչյունական օրենքի համաձայն բաղաձայնին բառավերջում չի կարող հաջորդել Վ և վ, այլ միայն նրանց շրթնային տարբերակը՝ ք-ն, ինչպես որ այդ տեսնում ենք սաւաւոյր ձևի մեջ:

1 Գրաբարի հոլովական սխառմի մասին, «Տեղեկագիր» Հայկական ՍՍՌ ԳԱ Հաս. գիտ. բաժանմունքի, № 1, 1948:

Գրաբարի պարզ հոլովումը

հնդեվ. *dom*-(հուն. *domos*) *stel*-(լատ. *stella*) *k'erdi- vedo*-(հն. *hydor*) *art*-(հուն. *αρτος*) *amor*-
 հոլովակազմիչներ

Եզակի ի	Ուղղ. Արշակ	տուն	աստղ	սիրտ	դետ	արդ	աւր	
	Սեռ. Արշակայ	տան	աստեղ	սրտի	դետոյ	արդու	աւուր	ն, ջ, նջ ¹
	Տր. Արշակայ	տան	աստեղ	սրտի	դետոյ	արդու	աւուր	»
	Հ. զԱրշակ	զտուն	զաստղ	զսիրտ	զդետ	զարդ	զաւր	
	Բաց. զԱրշակայ	ի տանէ	յաստեղէ	ի սրտէ	ի դետոյ	յարդու(է)	յաւրէ	է
	Գործ. Արշակաւ	տամբ	աստեղը	սրտիւ	դետով	արդու	աւուրը	վ,ւ,ը
Հոգնակի ի	Ուղղ. Արշակք	տունք	աստեղք	սիրտք	դետք	արդք	աւուրք	ք
	Սեռ. Արշակաց	տանց	աստեղց	սրտից	դետոց	արդուց	աւուրց	ց
	Տր. Արշակաց	տանց	աստեղց	սրտից	դետոց	արդուց	աւուրց	ց
	Հ. զԱրշակս	զտունս	զաստղս	զսիրտս	զդետս	զարդս	զաւուրս	ս
	Բաց. յԱրշակաց	ի տանց	յաստեղց	ի սրտից	ի դետոց	յարդուց	յաւուրց	ց
	Գործ. Արշակաւք	տամբք	աստեղրք	սրտիւք	դետովք	արդուք	աւուրրք	վք,ւք,ըք

¹ Այս հոլովակազմիչները պահպանված են միայն մի քանի բառերում, ինչպես, օրինակ, այր - առն, կին-կնոջ, տիւ-տունջեան և այլն:

Այսպիսով՝ մենք ունենք այստեղ գործիականի մեկ վերջավորություն, որն է շրթնային բ-ն իր տարրերակներով՝ և և վ։ Այդ շրթնային բ-ն հայտնի է հնդեվրոպական շատ լեզուներում, օրինակ՝ սանսկրիտ՝ sūnu-bhih — որդով, հին պարսկերեն (ավեստ.)՝ bazu-bis բազկով, լատիներեն՝ nominibus (անունով), urbi-bus (քաղաքով) և այլն։ Ուրեմն մենք հայերենի եզակի գործիական հոլովում ունենք հնդեվրոպական bhos bhis վերջավորության մնացորդի հայկական վարիանտը։

Հնդեվրոպական լեզվի մեջ դա գիտակցվում է որպես գործիականի՝ վերջավորություն։ Ինչպես գիտենք, գրաբար լեզվի մեջ ես, ինչպես և ժամանակակից հայերենում, դա գիտակցվում է իբրև գործիական հոլովի ցուցիչ։

Այսպիսով, գրաբարի գործիական ձևերի մեջ մենք գիտակցում ենք մի էլեմենտ, որ մատնացույց է առում հոլովը. ուրեմն դա հոլովման ցուցիչ է, որ կոչում ենք հոլովակազմիչ, ոմանք էլ այդ կոչում են հոլով սկերտիչ։


Գործիական հոլովաձևերի մեջ հոլովակերտիչին նախորդում են ա, ի, ո ձայնավորները, որոնք կապված չեն ուղղական ձևի հետ, որն հանդիսանում է բառի հոլովման հիմքը. նրանք կապված չեն նաև գործիականի վերջավորության հետ, որովհետև նրանք տարրեր բառերում տարբեր են, իսկ գործիական հոլովի վերջավորությունը բոլոր բառերում միևնույն բ-ն է կամ նրա տարրերակները (ւ, վ)։ Հետևաբար նրանք այստեղ անջատված են հիմքից և միացված չեն վերջավորության և ծառայում են այլ կատեգորիա արտահայտելու, քան հիմքն ու վերջավորությունն են։

Ուշագիշտ գիտելով ամբողջ հոլովման կառուցվածքը՝ նկատում ենք, որ այդ ձայնավորները առկա են բոլոր թեք հոլովներում, այսինքն՝ բոլոր հոլովներում, բացի ուղղական ու հայցական եզակի և հաճախ հոգնակի հոլովման մեջ։ Այստեղ միայն մեկ շեղում է նկատվում. որն է թիժ հոլովման բացառական ձևը, որտեղ պետք է լինեք թիժ, բայց մենք ունենք միայն Վէժ։ Այդ երևույթը հեշտ է բացատրել, եթե նկատի ունենանք, որ թիժ ձայնավորը հայերենում թույլ ձայնավորներից է և. եթե չեշտն իր վրա չէ, կարող է սղվել, ինչպես որ աեղի է ունեցել Խովյալ գեպքում։ Նշանակում է Վէժ-ի առկայությունը բացառական հոլովում ապացույց է, որ թիժ-ն նրա նախորդ վիճակում գոյություն է ունեցել, որովհետև, երբ մենք այդ բացառականի Վէժ-ին ունենում ենք նախորդող ախպիսի ձայնավոր, որն ուժեղ է հայերենում, այդ գեպքում Վէժ-ն է տեղի տալիս և անհայտանում, ինչպես որ տեսնում ենք յԱրշակայ և ի գ տոյ ձևերի մեջ։

Մեկ ուրիշ տեղ, որտեղ է-ին հավասար ուժի տեղ ձայնավոր է նախորդում, ինչպիսին է Վուժ-ն, մենք ունենում ենք բացառական ձևի երեք վարիանտ՝ յարդու, որտեղ գուրս է ընկած Վէժ-ն, յարդէ, որտեղ գուրս է ընկած Վուժ-ն, և յարդուէ, որտեղ առկա են և՛ Վուժ-ն, և՛ Վէժ-ն։ Այդ վարիանտը վկայում է, որ բացառական հոլովում ձայնավոր հոլովա-

¹ Այդ վերջավորությունն ունենում են հաճախ նաև հին պարսկ. և սանսկր. հոգն. տրական հոլովը, այլև երկակի թվի տրական-գործիական հոլովները, հին օսկերենում այդ վերջավորությունն օգտագործվում էր տրական, բացառական, գործիական և ներգոյական հոլովների համար (տես A. Meillet, *Revue de linguistique*, 1934, III, 135-136) ուս. թարգմ. 1938, էջ 307—308։

Տեղեկագիր 8—2



կազմիչին նախորդում է մի այլ ձայնավոր և, եթե այս կամ այն դեպքում այդ ձայնավորը չկա, ապա դա բացատրվում է ոչ թե հոլովական սխառեմով, այլ գրարարի հնչյունական օրենքներով, այսինքն՝ այն հանդիպումներով, որ տեղի են ունենում ուժեղ և թույլ հնչյունների միջև։ Այսպիսով, բոլոր դեպքերում գրաբարի թեք հոլովների մեջ հոլովակազմիչի և ռիմքի միջև առկա է մի ձայնավոր, որ չի գիտակցվում ո՛չ հիմքի հետ և ո՛չ էլ հոլովակազմիչի կամ հոլովական վերջավորության հետ, այլ առանձին։ Այդ առանձին գիտակցվող ձայնավորը կամ երկրարրառն (սուռ-ն) ունի առանձին ֆունկցիա. նա հոլովման տիպի ցուցիչ է կամ հոլովիչ է, ինչպես ընդունված է անվանել։ Այստեղից եզրակացնում ենք, որ գրարար լեզվի անվանական հոլովումն ունի դանազան տիպեր, որոնցից յուրաքանչյուրն արտահայտվում է ուղղական ձևի և հոլովակազմիչի մեջ երևացող ձայնավորով, որ կոչվում է հոլովիչ։

Հետևելով այդ ամբողջ սխառեմին՝ նկատում ենք, որ գրարարն ունի հինգ տիպի հոլովում, ուրեմն նաև հինգ հոլովիչ՝ ա, ե, ի, ո և ու։ Այդ տիպերին պատկանող հոլովումները կոչվում են պարզ հոլովում։

Մի գիտողություն ևս. «սուռ» հոլովման գործիական հոլովում նկատում ենք, որ առկա է միայն հոլովիչը (զարգու=զարգով), այսինքն՝ այստեղ բացակայում է գործիականին սովորական «օ» (սուռ կամ սուռ) հոլովակազմիչը. բայց այդ տեղի է ունենում այն պատճառով, որ գրարար լեզվի հնչյունական օրենքների համաձայն «սուռ»-ին չի կարող հաջորդել «օ», ոչ էլ «սուռ», որովհետև «սուռ»-ն նշանակում է երկրարրառն, որի երկրորդ էլեմենտը եղել է հենց կիսաձայն «-ն»։ Եթե վերջում ավելանար կամ կիսաձայն «սուռ», կամ «օ», կստանայինք կրկնակի «օ» հնչյուն, որ հայերենի բառավերջում չէր կարող արտասանվել։ Այդ պատճառով էլ պետք է եզրակացնել, որ գործիականի «սուռ»-ն արտացոլում է և՛ «սուռ» հոլովիչը, և՛ «սուռ» կամ «օ» հոլովակազմիչը։

Այսպիսով ստանում ենք գրարարի հոլովման մի ամբողջական պատկեր, բայց որի թեք հոլովներում գրարար լեզվի մեջ գիտակցվում են բառի երեք էլեմենտները՝ ռիմքը, որ նույնն է ուղղականի կամ սեռականի (տրականի) հետ, վերջավորությունը, որ հոլովի ցուցիչն է և նրանց միջև ընկած ձայնավոր կամ երկրարրառն հոլովիչը, որ հոլովման տիպի ցուցիչն է։ Այդ գիտակցումը գրարար լեզվի մեջ այնքան ուժեղ է և այնքան հետևողական, որ որևէ բացառություն չի բնորոշում, բացառություն, որին հասնում ենք հանդիպում լատիներենի, հունարենի և սանսկրիտի մեջ. օրինակ՝

Սանսկրիտ		Հունարեն	Լատիներեն
Nom.	dāta	γέρον ²	hortus ³
Gen.(Abl.)	datur	γέροντ-ος	horti
Dat.	dāt-r-e	γέροντ-ι	horto
Ac.	datar-am	γέροντ-α	hortum
Insg.	datr-a	—	horto
Loc.	datar-i	—	
Voc.	datar	γέρον	

¹ Տղիչ. ² ծերուկ. ³ այգի։

Նշանակում է՝ թեքման այդ յուրատիպության մեջ հնազույն լեզուներից ամենահետևողականը զրարարն է, որը մշակել է այդ սխտեմը մինչև տրամաբանական վախճանը:

Մի քիչ տարրեր է հարցը տուն և աստղ բառերի մեջ: Այդ երկու բառերում նկատում ենք տարրեր երևույթ, քան մյուս բոլոր բառերում: Այստեղ ևս կա բառի հիմքը, կա և յուրաքանչյուր թեք հոլովի վերջավորությունը կամ հոլովակազմիչը — (է, բ, ք, ս, ց, բք), բայց այստեղ չկա հոլովման տիպ ցույց տվող մասնիկը, որ սովորաբար լինում է, ինչպես տեսանք, բառի հիմքի և հոլովական վերջավորության միջև:

Մենք նկատում ենք, որ այդ երկու բառերի մեջ հոլովման տիպը ցույց տվող ձայնավորն ընկած է արմատի ներսում: Ինչպես տեսնում ենք, տուն բառի մեջ այդպիսի ցուցիչ ձայնավոր է սւն, որ առկա է բոլոր հոլովներում (տանէ, տամբ, տանց, տանց և տամբք) և աստղ բառի մեջ, որտեղ ցուցիչն է ճե՞ (աստեղ, աստեղէ, աստեղը, աստեղք, աստեղց, աստեղց, աստեղքք): Հոլովական ցուցիչն այստեղ երևում է բառի հիմքի ներսում կամ ուղղական ձևի սահմանների ներսը, ըստ որում մի դեպքում, ինչպես տուն բառն է, արմատական երկրարբառը վերածվել է հոլովացույց ձայնավորի՝ հոլովիչի, իսկ մյուս դեպքում երկու բաղաձայնի միջև ավելացել է այդ հոլովացույց նշանը կամ հոլովիչը: Այստեղ կատարվել է մի այնպիսի երևույթ, որ մյուս բառերի մեջ մենք չէինք նկատում: Այդ այն է, որ բառի հիմքի մեջ փոփոխություն կատարվելու միջոցով դրսևորվում է նույնպիսի դադափար, ինչպիսի դադափար դրսևորում են բառահիմքի և հոլովական ցուցիչի միջև ընկած ձայնավորները, այսինքն՝ բառահիմքի ներսում ձայնավորի կամ երկբարբառի փոփոխություն կատարվելով դրսևորվում է հոլովման տիպի գաղափար: Այստեղ տուն բառի վերածումը տան ձևի դրսևորում է այն դադափարը, թե այս ձևը թեք հոլովի բառ է և պատկանում է ժառ հոլովման, իսկ աստղ բառը աստեղ ձևի վերածվելով դրսևորվում է այն ըմբռնումը, թե այս ձևը թեք հոլովի բառ է և պատկանում է ժեռ հոլովման: Ուրիշ կերպ ասած՝ բառի ներսում առաջացած փոփոխությունը դրսևորում է բառի հոլովման տիպը: Իսկ այդպիսի փոփոխությունները կոչվում են ցերքին քերում: Նշանակում է՝ տուն և աստղ բառերը պատկանում են ներքին թեքման: Եթե այդ ներքին թեքման ըմբռնումը լսվի մեջ կա, պարզ է, որ հիմքից դուրս երևացող ձայնավորի միջոցով հոլովման տիպը դրսևորելու ձևը կդառնա արտաքին թեքում: Ուրեմն՝ զրարար լեզուն ունի ցերքին քերում և արտաքին քերում:

Դնենք հոլով ներքին թեքման բոլոր բառերը՝ նկատում ենք, որ նրանց մեջ ևս ա, ե և այլ ձայնավորները հանդիսանում են հոլովման ցուցիչներ, նշանակում է՝ ներքին և արտաքին թեքման մեջ գոյություն ունի համակցություն. միևնույն նշանները, երբ երևում են հիմքից դուրս, առաջացնում են արտաքին քերում, երբ երևում են հիմքից դուրս, առաջացնում են ցերքին քերում, ըստ որում հիմքից ներս հոլովիչները կամ ավելանում են երկու բաղաձայնների միջև կամ փոխարինում են հիմքի ձայնավորին կամ երկբարբառին: Այսպես տուն բառի մեջ ժառ հոլովիչը փոխարինում է ժոռ երկբարբառին, իսկ աստղ բառի մեջ ժեռ հոլովիչը երևում է երկու բաղաձայնների միջև: Այսպես էլ բոյր > բեռ ձևի մեջ ժեռ հոլովիչը փոխարինում է ժոյռ երկբարբառին, այր > առն,

հայր > հաւր և նման բառերի մեջ զառ հոլովիչը փոխարինում է զայն
երկրարրառին, աւր > աւուր ձևի մեջ զառ ձայնավորը առաջանում է կի-
սաձայնի և բաղաձայնի միջև, իսկ փոքր > փոքու, մանր > մանու, ծանր >
ծանու, բարձր > բարձու ձևերի մեջ զառ-ն երևում է բառավերջի զրա և
նախորդող բաղաձայնի միջև, որից հետո զրա-ն ընկնում է և ստացվում է
այն տավախորութունը, իբր հոլովիչը փոխարինում է զրա բաղաձայնին(մեղր
> մեղուր* > մեղու, ծանր > ծանուր* > ծանու, բարձր > բարձուր* > բար-
ձու և այլն):

Այսպիսով՝ ներքին թեքումը նույնպիսի օրինաչափ երևույթ է գրա-
բար լեզվի մեջ, ինչ որ արտաքին թեքումը. այդ թեքման հարցում գրա-
բար լեզուն, ըստ ամենայնի, հետևողական է և երևան է բերում անշեղ կա-
նոններ. Համեմատելով գրաբար լեզուն հունարենի, լատիներենի, սլավո-
ներենի և, նույնիսկ, սանսկրիտի հետ՝ նկատում ենք, որ նա բոնում է մի
առանձին տեղ. Այդպիսի երևույթներ, հատկապես արտաքին թեքման երե-
վույթներ, կան նաև հիշյալ լեզուների մեջ, սակայն այդտեղ թեքման
վիճակի դարգացումը չի հասել տրամաբանական վախճանին. Ավելին՝ ներ-
քին թեքումը չափազանց թույլ է, կամ բոլորովին չկա կամ չի դարգացած
և կամ չի դարձած օրինաչափութուն, մինչդեռ գրաբարի մեջ խիստ դար-
գացած է և դարձել է անշեղ օրինաչափութուն, բացառություններ չգիտ-
ցող օրինաչափություն: Հետևաբար գրաբարի հոլովական սխտեմը ներկա-
յացնում է լատիներենի, հունարենի, սլավոներենի և սանսկրիտի հոլովա-
կան սխտեմի տրամաբանորեն մինչև վերջ գրանորված վիճակը այն
չափով, որ անունների ձևարանական կառուցվածքի մեջ որևէ բացառու-
թյուն չունի և սխտեմի կանոնավորութունը հասցրել է ամենակատարյալ
աստիճանին:

Գրաբարի խառը հոլովումը

	ի-ա	ո-ա	ու-ա	և-ի	
հ.-ե. ¹ ang'hen	uu. bhri	հ.-ե. plios	հ.-ե. preisk'hu-	հ.-ե. bhi'gh-	
Ուղղ. անձն	բիր	ալի	երէց	բարձր	գիւղ
Սևո. անձին	բրի	ալւոյ	երիցու	բարձու	գեղջ
Ծո. անձին	բրի	ալւոյ	երիցու	բարձու	գեղջ
Հայց. դանձն	գրիր	զալի	զերէց	զբարձր	զգիւղ
Բաց. յանձնէ	ի բրէ	յալւոյ	յերիցու (է)	ի բարձու (է)	ի գեղջէ
Գործ. անձամբ	բրաւ	ալեաւ	երիցամբ	բարձամբ	գիւղիւ
Ուղղ. անձինք	բիրք	ալիք	երիցունք	բարձունք	գիւղք
Սևո. անձանց	բրաց	ալեաց	երիցանց	բարձանց	գիւղից
Ծր. անձանց	բրաց	ալեաց	երիցանց	բարձանց	գիւղից
Հայց. դանձինս	գրիրս	զալիս	զերիցունս	զբարձունս	զգիւղս
Բաց. յանձանց	ի բրաց	յալեաց	յերիցանց	ի բարձանց	ի գիւղից
Գործ. անձամբք	բրաւք	ալեաւք	երիցամբք	բարձամբք	գիւղիւք

Գրաբարն ունի հոլովման մի երկրորդ տիպ, որը ներկայացվում է
վերևի աղյուսակով: Դիտելով այդ աղյուսակը և համեմատելով առաջինի
հետ՝ նկատում ենք, որ այդ երկուսի մեջ կա մեծ նույնութուն, բայց և

¹ Հ.-ե.-հնդեվրոպական

մի սկզբունքային տարբերություն. նույնությունն այն է, որ այստեղ ևս նկատում ենք և՛ ներքին թեքում, ինչպիսին ունենք անձն և բարձր բառերում, և՛ արտաքին թեքում, ինչպիսին ունեն րիւր, երէց, ալի բառերը: Գիւղ բառն ունի և՛ ներքին, և՛ արտաքին թեքման ձևեր:

Միաժամանակ տեսնում ենք, որ այստեղ ևս գոյականները ուղղական հոլովում ձևարանական որևէ հատկանիշ չունեն, իսկ թեք հոլովներում կան երեք ձևույթներ՝ հոլովման հիմք, հոլովման վերջավորություն կամ հոլովակազմիչ և հոլովիչ (անձամբ, բր/ա/ց, երից/ա/մբ, բարձ/ա/մբբ):

Այս նմանությունից գուրս այստեղ տարբերությունն այն է, որ յուրաքանչյուր բառ մեկ հոլովիչի փոխարեն ունի երկու հոլովիչ, որոնցից մեկը գործում է մինչև բացառականը, իսկ մյուսը հետո և հոգնակի ձևերում: Այդ հոլովիչները, որ զուգ-զուգ են, կապված են պարզ հոլովման նշաններից, այն է ի-ա, ո-ա, ու-ա, և ե-ի: Այս հոլովումներից չի-առ-ն հանդիսանում է գրարարի գոյականների զգալի մասի հոլովման ցուցիչը, չո-առ-ն նույնպես ծառայում է զգալի թվով բառերի, չու-առ-ն ներկայացված է ներքին թեքման մեկ բառով (բարձր) և արտաքին թեքման մեկ բառով (երէց), իսկ չե-իռ-ն ներկայացված է միայն մեկ զյուղ բառով, որի առաջին հոլովիչը (ե) ներքին թեքման է, իսկ երկրորդ հոլովիչը՝ արտաքին թեքման է (ի):

Նայելով այդ բարձր, երէց և գիւղ բառերի հոլովական կառուցվածքին՝ նրանց մեջ նկատում ենք նույն սիստեմավորությունը, ինչ որ այն հոլովումների մեջ, որոնք ներկայացված էին բազմաթիվ բառերով: Դա մեզ թելադրում է այն միտքը, թե այդ երկու խառը հոլովումները երբեմնի ներկայացված են եղել ավելի մեծ թվով բառերով և այժմ գրանցից մնացել են այդքան քիչ թվով բառեր: Եթե մենք չմոտենայինք գրանց ներքին և արտաքին թեքման, հոլովիչի և հոլովակազմիչի ըմբռնման տեսանկյունով, պիտի գրանք համարեինք բացառություններ, ինչպես համարել են մեր շատ քերականներ: Իայց տեսնում ենք, որ գրանք հոլովման հարցում նույնչափ հետևողական և օրինաչափ են, որքան մյուս բոլոր բառերը:

Պետք է ուրեմն եզրակացնել, որ քերականության մեջ բացառություն կազմող բառերը ամենահետադրական բառերն են, նրանք ոչ թե բացառություններ են, այլ հին օրինաչափությունների փոքրաթիվ վկաներ և լեզվի պատմության հին փուլերի ներկայացուցիչներ: Այդպիսի մոտեցումը, հավանական է, ննարավորություն կտա թափանցելու լեզվի անցյալ շրջանների այնպիսի փուլերի մեջ, ուր թափանցելու որևէ այլ ճանապարհ չկա: Դրարար լեզվում բացառություններ համարվածները, գոնե մեր կարծիքով, ամենաօրինաչափ բառերն են:

Ինտելով այն երևույթը, որ մեկ բառն ունի միաժամանակ երկու հոլովիչ՝ գիտությունը այդպիսի հոլովումը կոչել է խառը տիպի հոլովում: Խառը տիպի հոլովումները թվով 4 են, ինչպես պարզ տիպի հոլովումները՝ թվով 5 են:

Այսպիսով՝ գրարարի հոլովական սիստեմը ներկայացնում է ներքին և արտաքին թեքումներ, խառը և պարզ տիպի հոլովումներ:

Այս տիպերը կառուցված են հոլովիչների և հոլովակազմիչների ձևարանական գիտակցման վրա: Այս տիպերն ընդգրկում են գրարարի բոլոր բառերը և գրարարում գրանցից բացառություններ կազմող բառեր գոյություն չունեն:

Բոլոր այն բառերը, որոնք ավանդական քերականության մեջ ճանաչված են որպես բացառություններ, գրաբարի հոլովման գիտական տեսակետից երևում են ամենաօրինաչափ սխտեմի բառեր։ Դրանց մեջ ամենաանկանոնը կամ բացառություն կազմողը ներկայացնում է «այր» բառը, որի հոլովումը տալիս ենք հետևյալ աղյուսակով։ Միաժամանակ գրան ավելացնում ենք այդ այր բառից կազմված աչր բառի հոլովումը։ Այդ աչր բառը կազմված է աիայր = ամեծ այր» երկու արմատներից։

Հոլովման ժամանակ աչր բառը տարրալուծվում է իր երկու բազադրիչ մասերի՝ աի և այր, որոնցից աի բառը մնում է անփոփոխ, փոփոխվում է միայն երկրորդ բազադրիչը այր բառը, իր սեփական կանոններով։

Ե զ ա կ ի

Ուղղ.	այր	տէր (տի-այր)
Սեռ.	առն	տեառն
Տր.	առն	տեառն
Հայց.	դայր	դտէր
Բաց.	յառնէ	ի տեառնէ
Գործ.	արամբ	տերամբ

Հ ո գ ն ա կ ի

Ուղղ.	արք	տեարք	տեարք
Սեռ.	արանց	տերանց	տեարց
Տր.	արանց	տերանց	տեարց
Հայց.	դարս	դտեարս	դտեարս
Բաց.	յարանց	ի տերանց	ի տեարց
Գործ.	արամբք	տերամբք	տեարբք

Դիտելով «այր» բառի հոլովական բոլոր ձևերը՝ նկատում ենք, որ ուղղական ձևի «այ» երկրորդառիթմ թեք ձևերում վերածվում է «ա» հոլովի, սերմն այդ բառը ներքին թեքման «ա» հոլովման բառ է։ Սեռականից սկսած նկատում ենք «ն» հոլովակազմիչ, որ առկա է բոլոր թեք հոլովներում (առն, յսռն, արսմբ, արանց, արամբք)։ Բացառականը, գործիականը ինչպես և հոգնակի բոլոր ձևերը ստանում են համապատասխան հոլովակազմիչներ։ Այդ բառի մեջ անկանոնն այն է, որ գործիականում «ն»-ի փոխարեն ունենք «մ»։ Բայց դա անկանոնություն չէ, որովհետև շրթնայիններից առաջ «ն» հնչյունը հայերենում միշտ կվերածվի «մ»-ի։

Այդ կանոնը հայերեն լեզվի մեջ գոյություն ունի հնդեվրոպական փոճակից սկսած. այսպես՝ հայերեն լեզվի «ամպ» բառը, որի մեջ «պ»-ին նախորդում է «մ» հնչյունը, ուստի երևում ներկայացված է «ներ» (небо) հնչյուններով, հունարենում neph հնչյուններով (nephos—երկինք), լատիներենում «neb» հնչյուններով (nebula—երկինք), սանսկրիտում «nabl» հնչյուններով (nabhas—երկինք)։ Սակայն սանսկր. ambu—«ամպ», լատիներենի numbus—«ամպ» բառերի մեջ հայերենի նման «ո» (ն) հնչյունը շրթնայիններից առաջ վերածվել է «ո» «մ» հնչյունի։

Նշանակում է՝ այստեղ տարօրինակություն և անկանոնություն չկա, այս երևույթը ոչ թե ձևաբանական, այլ հնչյունական երևույթ է։ Նույն-

1 Բացի «ան» նախածանցի «ն» հնչյունից։

պես և սեռական հոլովի թոճ հնչյունը՝ (առն՝ փոխանակ «այր») բացատրություն է նրանով, որ ճնձ-ի նախորդող թրձ-ն վերածվում է թոձ-ի, ինչպես, օրինակ, ամառն-ամարսն, ձմեռն-ձմերսն և այլն, որտեղ ն-ին մոտենալիս թրձ-ն վերածվում է թոձ-ի, հեռանալիս՝ պահպանվում է թրձ: Ուրեմն դա էլ հնչյունական երևույթ է և ոչ ձևաբանական:

Արտակարգ երևույթ է թվում նաև գործիականի արամբ ձևի երկրորդ ժամ-ն, որ չունի առն բառը. այդ էլ հասկանալի կլինի, եթե նկատի ունենանք, որ առն բառի վրա ավելանում է նաև մի բաղաձայն, այն է գործիական հոլովակազմիչ թրձ-ն, որով բառավերջում ստեղծվում է երեք բաղաձայն: Հայերենն այդպիսի կուտակում չի սիրում: Ժամանակակից հայերենը այդ երեքի միջև կավելացնե՞ր մեկ թրձ, այդպես է արել նաև գրարարը և ստացվել է թարբմբ: Հետագայում թրձ ձայնավորը ենթարկվել է պրոգրեսիվ ասիմիլյացիայի և դարձել է թաձ իրեն նախորդող վանկում եղած թաձ հոլովիչի ազդեցությամբ: Նշանակում է՝ այդ երևույթը նույնպես բացառություն չէ և ձևաբանական էլ չէ, այլ հնչյունական: Դրան իրրե ասացույց ծառայում է տէր բառի հոլովումը, որի հոգնակի սեռական ձևերում, երբ առկա է եղակի սեռականի ճնձ հոլովակազմիչը, ստանում է թերանց ձևը, այսինքն՝ պրոգրեսիվ ասիմիլյացիայի հետևանքով առաջացած թաձ ձայնավոր թրձ-ի և ճնձ-ի միջև: Բայց երբ ճնձ հնչյունը բացակայում է և սեռականի թրձ հոլովակազմիչն ավելանում է թրձ-ի վրա, այդ դեպքում բառավերջում ստացվում են երկու բաղաձայններ, և կարիք չի զգացվում վերոնշյալ ասիմիլյատիվ երևույթի, ուրեմն և թրձ-ին հաջորդող թաձ-ն բացակայում է, որից և ստացվում է տնարց, տեարբ ձևերը, փոխանակ, տերանց, տերամբ ձևերի: Ինչպես տեսնում ենք, ամենաանկանոն համարված այդ գոյականը միանգամայն կանոնավոր է հոլովվում և բացառություն չի կազմում:

Այսպիսով գրարարի հոլովման սխառումը մի իսկական կատարելություն է, միայն պետք է դարմանք հայտնել, թե ինչպես մի ժողովուրդ, որը գտնվելիս է եղել հազարավոր տարիների ընթացքում արտաքին և ներքին ուժեղ ազդեցությունների ներքո, իր քերականական սխառումի մեջ որևէ ազդեցություն չի ընդունել, որևէ ճեղքում չի կատարել և իր ներքին զարգացման պրոցեսը հասցրել է տրամաբանական վախճանին:

Չարմանալի և հիանալի է այդ ամենը այն պատճառով, որ պատմությունը բազմաթիվ փաստեր է տալիս, իսկ մեր պատմաբաններն էլ այդ փաստերը իրենց ուժի և կարողության չափով խտացնում են, որ հայերը ուժեղ կերպով ենթարկվել են փոքրասիական, այդ թվում և խեթական, խուրրիտական ժողովուրդների ազդեցության, որ դրանք էլ ավելի մեծ չափով են ենթարկվել կովկասյան ժողովուրդների ազդեցության և՛ արտաքին, և՛ ներքին ճանապարհով. արտաքին՝ ճնշվելով նրանցից և ներքին՝ ձուլվելով նրանց մի մասը իրենց մեջ, — որ նրանք ենթարկվել են ուրարտների ազդեցության, որոնց ձուլել են իրենց մեջ, և բազմաթիվ այն ցեղերի ազդեցության, որոնք ուրարտ չէին, բայց նույնպես ձուլվել են հայերի մեջ, և վերջապես, որ իրենք ենթարկվել են պարսիկների խիստ ազդեցության և այլն, և այլն: Այդ բոլորից հետո հայերը ներկայացնում են մեզ մեր դարաշրջանի 5-րդ դարում մի այնպիսի լեզու, որի անփանական հոլովումը հանդիսանում է ճնդելվրդալիսն սխառմի ամենազարգացած հետագա

վիճակը՝ համեմատած իր սագգակից բոլոր լեզուների հետ, որը իր ներքին օրենքներից ոչ մի շեղում էի կատարել և ոչ մի բացառություն չունի և որն իր սխառեմի զարգացումը հասցրել է այնպիսի մի բարձր գագաթի, որից այն կողմն այլևս գագաթ չկա:

Բայց ինչպես է առաջացել այդ սխառեմը:

Հնդեվրոպական նախավիճակի բառը, հատկապես անունը, ինչպես հետադոտողներն են պարզել¹, ուղղական վիճակում ներկայացնում էր մի ամբողջություն, որի մեջ գիտակցվում էին բառահիմքը և վերջավորությունը:

Հնդեվրոպական բառերը, սովորաբար, վերջավորվում էին ձայնավորով, կամ սուլականով (s) և կամ ձայնորդներով (n, r):

Հնդեվրոպական անվան հիմքը սովորաբար վերջավորվում էր ձայնավորով (օրինակ՝ vedo-—գետ, kerdī-—սիրտ և այլն):

Այն դեպքում, երբ հնդեվրոպական բառահիմքը վերջավորվում էր բաղաձայնով և նրան կցվում էր ուղղական ձևի վերջավորությունը, հիմքի բաղաձայնի և բաղաձայն վերջավորության միջև առաջանում էին «ն» կամ «ո» ձայնավորները: Իրանք գիտություն մեջ կոչվում են քեմատիկ ձայնավորներ: Թեմատիկ ձայնավորները գիտակցվում էին հիմքի հետ այնպես, ինչպես հիմքի ձայնավորը. օրինակ՝

հնդեվ. nevro-s > լատ. novu-s > սլավ. novu > հյեր. նոր (ոյ).

հնդեվ. domo-s > հն. domo-s > լատ. domus > սլավ. domu.

հնդեվ. seno > հուհ. hēnos > լատ. sen-ex > իթ. sen-as > հյեր. հին(նոյ):

Հնդեվրոպական նախավիճակում գոյակապները, ինչպես և ածականները ենթարկվում էին հոլովման: Հոլովումը կատարվում էր հոլովակաղմիչների միջոցով, որոնք ավելանում էին ուղղական ձևի վրա կամ՝ որոնք փոխարինում էին ուղղական ձևի բաղաձայնին: Իբր օրինակ բերենք սանսկրիտի և հունարենի հոլովումը, որոնք համեմատաբար մոտ են հնդեվրոպական վիճակին.

	Սանսկրիտ	Հունարեն
Ուղղ.	vṛka- ²	λυκο- ³
Սեռ.	vṛka-sya	λυκο- ³ ο
Տր.	vṛka-i	λυκο- ³ ι
Հայց.	vṛka-ni	λυκο- ³ ν
Ներգ.	vṛka-	λυκο- ³ ι

Հնդեվրոպական բառերը իրենց հիմքի՝ կամ քեմատիկ ձայնավորները սովորաբար պահպանում էին բոլոր հոլովներում: Այդ ձայնավորները գիտակցվում էին հիմքի հետ և հանդիսանում էին իբրև հոլովման տիպի ցուցանիշ, սակայն ոչ առանձին վերցրած, այլ հիմքի հետ միասին.

¹ См. А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков. 1938.

² Գայլ:

³ Գայլ:

Սանսկրիտ	Լատ.
Ուղղ. kanya ¹	fructu-s ²
Սեռ. kanya-yas	fructu-s
Տ. kanya-yai	fructu-i
Հ. kanya-m	fructu-m
Գ. kanya-ya	fructu
Ն. kanya-yam	

Հատիներեն, հունարեն, սանսկրիտ լեզուները հնդեվրոպական ձայնավոր հիմքը բառերի մեծ մասում պահպանեցին թե՛ ուղղականում և թե՛ սեռական հոլովներում։ Ուստի այդ հիմքի ձայնավորները մնացին այդ լեզուների մեջ իրրև հոլովման տիպի ցուցանիշներ, բայց միայն որոշ թվով բառերի մեջ։

Բայց որովհետև զգալի չափով անունների հիմքի ձայնավորները այլ-ևայլ փոփոխություններ կրեցին տարբեր հոլովներում, ուստի հոլովացույց ձայնավորները (հոլովիչները) չպահպանվեցին հետևողականորեն բոլոր հոլովներում և բոլոր բառերի մեջ։

Օրինակ՝

Սանսկրիտի i-ն հոլովումը	Լատ. օ հոլովումը
Ուղղ. kavis ³ -s	bellum bellī ⁴
Սեռ. kaves -es	bellī bellorum
Տր. kavaye-aye	bello bellīs
Հ. kavim -in	bellum bellōs
Բ. kaves -es	bello bellīs
Գ. kavibis-bis	
Ն. kavau -u	

Բնչպես տեսնում ենք, հնդեվրոպական հոլովման տիպերի սիստեմը հին լեզուների մեջ պահպանվեց միայն մասամբ և հատուկ զարգացում չստացավ։

Սլավոնական լեզուների մեջ հնդեվրոպական բառի ուղղական ձևը որոշ դեպքերում ենթարկվեց փոփոխության։ Սլավոնական լեզուների մեջ գործող բաց վանկերի, ձայնավորների սղման, ձայնավորների ռեզայնացման և ապառնգայնացման օրենքները փոխեցին զգալի թվով բառերի թե՛ ուղղական և թե՛ թեք ձևերը թե՛ հիմքում և թե՛ վերջավորությունների մեջ։ Հետևանքը եղավ այն, որ սլավոնական լեզվի հոլովման տիպերը հնդեվրոպականներից որոշ շեղում կատարեցին՝ մասամբ միայն պահպանելով դրանք։ Սլավոնական լեզուների մեջ բառերի հիմքի ձայնավորների գիտակցումն

¹ Երիտասարդ աղջիկ։
² Միրդ։
³ Բանաստեղծ։
⁴ Պատերազմ։

ազոտացավ, ուժեղացավ հոլովակազմիչների գիտակցումը: Իրրև օրինակ վերցնենք «Օ» հիմքով հոլովումը՝

	Սլավոն. լեզու		Հին ռուսերեն		Նոր ռուսերեն	
	եզ.	հոգն.	եզ.	հոգն.	եզ.	հոգն.
Ուղղ.	сел-о	сел-а	сел-о	сел-а	сел-о	сѣл-а
Սեռ.	сел-а	сел-ъ	сел-а	сел-ъ	сел-а	сѣл
Տր.	сел-оу	сел-омъ	сел-у	сел-омъ	сел-у	сѣл-ам
Հ.	сел-о	сел-а	сел-о	сел-а	сел-о	сѣл-а
Գ.	сел-омъ	сел-ы	сел-ъмы	сел-ы	сел-ом	сѣл-ами
Ներդ.	сел-ѣ	сел-ѣхъ	сел-ѣ	сел-ѣхъ	сел-е	сѣл-ах

Ահա այդ հոգի վրա առաջացավ սլավոնական լեզուներում հնգեվրոպական անվանական հոլովման ձևույթների (հիմքին վերջավորության) վերագասավորումը կամ վերախմբավորումը:

Բոլորովին այլ բնույթ ընդունեց հայերենի մեջ հնգեվրոպական անվանական հոլովման զարգացման պրոցեսը: Հայերենի մեջ զարգացման այդ պրոցեսը ընդունեց զարմանալի հետեղական և օրինաչափ բնույթ: Այն ժամանակ, երբ հնդեվրոպական այլ հին լեզուները զարգացման մի փուլը չեն հասցնում մինչև վախճան և անցնում են հաջորդ փուլին, հայերեն լեզուն իր զարգացման ընթացքում հենց աչքի է ընկնում նրանով, որ մեկ փուլը զարգացնում է մինչև իր տրամաբանական վախճանը և ապա սկսում հաջորդ փուլի զարգացումը: Ընդունված էր կարծել, որ հայերեն լեզուն հնգեվրոպական լեզուներից ամենաշատ խառնված լեզուն է. Ն. Մատթ հուշն-իսկ ստեղծեց հայերենի խառնածին լինելու առասպելը և գցեց փորձանքի մեջ թե իրեն, թե առաջին սերնդի և թե, հուշնիսկ, երկրորդ սերնդի իր աշակերտներին:

Բայց հայերենի քերականական սխառմի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նրա մեջ չկա խառնածինություն ոչ մի հետք: Եթե օրինաչափությունների զարգացման կիսկատարությունն ընդունենք խառնածինություն արտահայտություններից մեկը, ապա հնգեվրոպական բոլոր հին լեզուները խառնածին են, բացի գրաբարից:

Մենք, իհարկե, բնավ չենք ընդունում քերականության մեջ խառնածինությունը: Եթե քերականության մեջ օրինաչափությունների տարբեր գույակցություններ կան, դրանք հետևանք են լեզվի զարգացման ներքին օրենքների: Օտարների ազդեցությունը քերականության վրա անմիջական չէ. այլ այնպես է, ինչպես քիմիական նյութերի միացման ժամանակ կատալիզատորի դերը:

Այդ հարցը պարզելու համար քննենք, թե ինչպես է առաջացել գրարարի հոլովման այս զարմանալի կառուցվածքը:

Հնգեվրոպական լեզվից հայերենի վիճակին անցնելու բոլոր երևույթների պատճառը մեկ է. դա շեշտի տեղափոխությունն է վերջին վանկից դեպի նախավերջին վանկը: Մեյերի խոսքերով ասած՝ C'est à l'accent qu'est du le changement essentiel d'aspect des most indo-européen sur

le sol armenien... «Հնդեվրոպական բառերի արտաքին ձևի էական փոփոխությունը հայկական հոգի վրա պետք է վերագրել շեշտին»¹:

Հնդեվրոպական լեզուն ուներ երաժշտական շեշտ, բայց այն լեզուները, որոնք առաջացան այդ հնդեվրոպական լեզվից, այդ երաժշտական շեշտը վերածեցին բարձրության (ուժգնության) շեշտի: Այդ պրոցեսում յուրաքանչյուրն այդ կատարեց իր ձևով, և առաջացավ շեշտադրության տարբերություն հնդեվրոպական զանազան լեզուների մեջ: Ինչպես գիտենք, ուսանելն լեզվի մեջ շեշտը որոշակի տեղ չունի, նա կարող է դնել զանազան բառերի զանազան վանկերում: չեխերենի մեջ շեշտը բառի առաջին վանկի վրա է, յատիներենի մեջ մեծ մասամբ նախավերջին վանկի վրա, բայց երբեմն նաև երրորդ վանկի վրա, պարսկերենում, փրանսերենում, գրաբարում և ժամանակակից հայերենում՝ վերջին վանկի վրա և այլն:

Ինչպես ցույց է տվել հետադոտությունը, սկզբնապես, երբ հնդեվրոպական լեզվից ճշգրտավորվել է հայերենը, կազմելով ուժգնության շեշտադրություն, շեշտը տեղափոխել է վերջինից նախավերջին վանկի վրա: Այդ եղել է զրգապատճառը բոլոր այն փոփոխությունների, որոնք տեղի են ունեցել հայերեն լեզվի մեջ, որոնք կերպավորել են հայերեն լեզուն և տվել են նրան նախ գրարարի կերպարանքը և ապա ժամանակակից հայերենի կերպարանքը: Իրեն սրինակ կարելի է վերցնել հայերեն «տեղ» բառը, որը գրարարում եղել է «տեղի» ձևով: շեշտը տեղափոխվելով նախավերջին վանկի վրա, ստացվել է նախ «տեղի» ձևը, որից վերջավորության անկումով ստացվել է ժամանակակից «տեղ» բառապատկերը: Այժմ էլ ունենք վերապրուկորեն մնացած «տեղի տալ», «տեղի ունենալ» ոճերում գրարարի «տեղի» բառապատկերը: Շեշտի տեղափոխությունը վերջին վանկից դեպի նախավերջին վանկը ժամանակի ընթացքում պատճառ է դարձել, որ հնդեվրոպական բառերի վերջին վանկը հայերենում անհայտանա: Երբեմն վերջին վանկի փոխարեն անհայտացել է միայն վերջին վանկի ձայնավորը: դա և՛ առաջացրել է հայերենի բառերի կրճատումը մեկ վանկով: Այսպես հնդեվրոպական māter, pater երկվանկ բառերի փոխարեն հայերենում կան միավանկ մայր, հայր բառերը, swesor երկվանկ բառի փոխարեն կա միավանկ «քույր» բառը, snuso երկվանկ բառի փոխարեն, հայերենում կա «նու» = հարս միավանկ բառը և այլն:

Բառի վերջին վանկի կրճատումը հայերեն լեզվի կերպավորման համար ունեցել է շատ մեծ նշանակություն, որովհետև հնդեվրոպական բառերի վերջին վանկի մեջ ամփոփված էին բառի հիմնական քերականական ձևույթները: Հասկանալի է, որ այդ վանկի անկման հետևանքով հայերեն բառը կորցնում էր իր քերականական այն ձևույթները, որ ամփոփված են եղել այդ վերջին վանկում: Այսպես, օրինակ, հնդեվրոպական բառի վերջին վանկում ամփոփված է եղել ուղղական ձևի նշանը, որով արտահայտվում էր սեռի գաղափարը: Այդ վանկի անկումով հայերեն բառերը կորցնում են սեռի գաղափարը: Ինչպես վերևում ասացինք, հնդեվրոպական բառի ուղիղ ձևն ունի վերջավորության գիտակցումը, ուրեմն յուրաքանչյուր գոյականի մեջ զգացվում են հիմք և վերջավորություն, մինչդեռ հայերենի գոյականների բոլոր ուղղական ձևերը վերջավորության գրեթե ունենում չունենում:

¹ A. Meillet, Esquis d'une grammaire comparée de l'armenien classic, 1903.

ներն: Եթե նկատի չունենանք ածանցները, ապա ամենայն իրավամբ կարելի է ասել, որ գրարարի, այլև ժամանակակից հայերենի բոլոր անվանական բառերն անձն են, ամորֆ են իրենց ուղիղ ձևերում: Դրանով հայերեն լեզուն որակապես տարբերվում է հնդեվրոպական վիճակից:

Այսպես չէ՝ ուսերենը, այսպես չեն նաև լատիներենը, հունարենը, սանսկրիտը և այլն: Ճիշտ է, այդ լեզուների մեջ վերջավորության անկում եղել է, բայց միայն որոշ թվով բառերի, իսկ ֆնացածների մեջ այդ վերջավորությունները պահպանվել են կամ նույնական կամ արտացոլված ձևով:

Վերջինից նախավերջին վանկի վրա շեշտը տեղափոխելու մեջ հայերենը եղել է խիստ օրինաչափ և հետևողական, և դրա հետևանքով վերջին վանկի անկմամբ հայերեն լեզվի մեջ առաջացել են այնպիսի նոր երևույթներ, որոնք նրա զարգացումը տարել են ինքնուրույն ճանապարհով:

Ասացինք, որ հնդեվրոպական անունները ենթարկվում էին հոլովման, այդ կատարվում էր ուղղական ձևի վրա նոր վերջավորություն ավելացնելով: Հետևաբար թեք ձևերում հնդեվրոպական բառի վրա ավելանում էր հաճախ մեկ վանկ, իսկ որսվհետե հայերենը կորցնում է մեկ վանկ բոլոր ձևերի մեջ, ուրեմն թեք ձևերի մեջ նույնպես հայերենը շեշտում էր նախավերջին վանկը, որ հավասար էր հնդեվրոպական ուղղական ձևի վերջին վանկին. դրա հետևանքով հայերենի սեռական ձևը պահպանել է հնդեվրոպական ուղղակի:սնի հիմքը՝ վերջին ձայնավորի հետ միասին: Հետևաբար հայերենի սեռական հոլովածը պետք է նման լինի հնդեվրոպական ուղղական հոլովածին: Եվ իրոք, այդ այդպես է: Ահա օրինակները (տե՛ս հաջորդ էջում):

Այս օրինակները կարելի է բաղմացնել: Եթե հայերենի սեռական հոլովի մեջ արտացոլվում է հնդեվրոպական ուղղական հոլովածը, ապա կարելի է՝ ենթադրել, որ հայերենի սեռական հոլովածները կարող են կուլան ծառայել ամեն մի դեպքում վերականգնելու հնդեվրոպական նախավիճակի ուղիղ ձևերը և ընդհակառակն, մի բան, որ հնարավոր չէ կատարել ուրիշ լեզուների օգնությամբ. օրինակ՝ մենք չունենք «փին»¹ բառի սեռական ձևը, որ գրարարում չի հաղորդված: Նկատի ունենալով հունական πῖνος, ձևը կարելի է ասել, որ հայերենում սեռականը եղել է «փինոյ» և այդ բառը պատկանել է «ո» հոլովման: Այդ հաստատում է բարբառային «փնովել» (մեկին գատապարտել, բառացի՝ աղբոտել) ձևը, որը կազմված է «փին» բառի գործիական հոլովից. փին-փնոյ-փնով>փնովել:

Վերոհիշյալ երևույթները, սակայն, հայերենի հոլովական սխտեմի համար ունեցան խոշոր նշանակություն: Ասացինք, որ հայերեն լեզվի թեք հոլովներում (սեռականում և այլն) պահպանվել են հնդեվրոպական սկզբնականի բառահիմքի ձայնավորները, բայց ուղղական հոլովում չեն պահպանվել, ուրեմն՝ հայերենի թեք հոլովները տարբերվում են ուղղականից հիմքի վերջին ձայնավորով և նման են միմյանց հենց այդ ձայնավորի շնորհիվ. հենց այդ պատճառով էլ հիմքի այդ ձայնավորը դառնում է ցուցանիշ ուղղականի և թեք հոլովների տարբերության: Եթե հունարենում, լատիներենում, սանսկրիտում անվան հիմքի ձայնավորն առկա է և՛ ուղղական, և՛ մյուս բոլոր հոլովներում, նա չի գիտակցվում հիմքից առանձին և ձևա-

¹ Աղբ:

Գրաբարի ուղղ.	Փրաբարի սեն. հ.	Հնդեվրոպ. նախայ. ուղղ.	Սանսկ. ուղղ. հ.	Հուլար. ուղղ.	Հռոմե. ուղղ. հ.	Սլավոն. ուղղ.	
ալիւր ¹	ալիւր կամ ² ալիւրոյ	aleuro-	—	aleuron	—	—	
ամպ (ամբ)	ամպոյ (ամբոյ)	ambhó	ambu	néphos	hímhus	небо	
ալի	ալւոյ	plios	—	polios	—	—	
աղբիւր	աղբեր	bhrevr	—	phrear	—	—	
աղօրի	աղօրւոյ	allatrios]	—	aletrios	—	—	
ալի	ալլոյ	ailos	—	allos	alius	—	
անպունդ	անպնդոյ	bhundhos	—	—	fundus	—	
աստղ	աստեղ	ster. stel	—	aster	stella	—	
աւր	աւու	p'k'u	paçu	pukos	pexus	—	
(դ)արդ	(դ)արդու	art-	rtu	arty's	—	—	
արեղ	արեղի	rev-	ravi	—	—	—	
արծաթ	արծաթոյ	arg'-alo	—	—	argentum	—	
արջ	արջոյ	rkthos	—	árktos	ursus	—	
բիր	բիրի	bher	bhri	—	feri-o	—	
բերան	բերանոյ	bhri-r-ano	—	—	—	—	
զայլ	զայլոյ	vailo	vřka	ly'kos	lupus	—	
զան	զանի	g'neni	—	—	—	голубъ	
զառն	զառան	vare'n	urřu	—	—	—	
զեւ	զեւոյ	vedo	udan	hy'dur	—	вода	
զէջ	զէջոյ	g'hoidhyu	—	—	—	зидѣнѣ	
զին	զինոյ	vesno	vasno	ōpus	venum	—	
զինեբ	զինեբոյ	weqero	—	hesperos	—	večeru	

¹ Հ. Անալ. 106. Հայոց լեզվի պատմութեան 1 մաս.

Իրարարի ու. գգ. հ.	Երարարի սիւս. Վ.	Հնդեկաց. նախար. ու. գգ. հ.	Սանսկ. ու. գգ. հ.	Հուհար. ու. գգ. հ.	Հատիկ. ու. գգ. հ.	Սլավոն. ու. գգ. Վ.	
դործ	դործոյ	varg'-	—	ergon, lorgos			
դուստր	դուստր	drukter'	duhitor	thygater	—	—	
էւլ	երիցու	preisk'u	—	présbys	priscus	—	
էշ	իշոյ. իշու	ek'wo	áčva	hippos	equus	—	
թի	թիւ	pilo	—	ply'on	—	—	
թումբ	թումբ	tum-	—	ty'mbos	tumulus	—	
թուր	թրոյ	tör-	—	toros	tero		
լուս	լուսոյ	lauk o	—	leukos			
ծեր	ծերոյ	—	—	geron			
կողի	կողոյ	g ² avio	gavya	—	—		
կով	կովու	g ² ov-	gaus	boús, bolos	—	—	
հաս(արար)	հասոյ	awo	—	—	avus		
հետ	հետոյ	pedo	—	pod's, podos	—		
հինգ	հնգի	penk ² e	—	penle	quinque	pen	իթ. penki
ձիբ	ձիբ	g'hër	—	charis	hori-or		
մանր	մանու	mānu	—	māny	minus		
մարդ	մարդոյ	mrlu	—	mortos	—	—	
մէջ	միջոյ	medya	madhya	messos	medius	—	
նաւ	նաւու	nau	nau	naús	navis		
նոր	նորոյ	nevros	nava	néos	novus	novû	
նու	նուոյ	snuso	snusa	nyos	nurus	snûcha	
շուս	շուս	k'won	çvan	kyion	kanis	—	

Գրաբարի ուր. Կ.	Գրաբարի հն. Կ.	Հնդկական ճառարան, ուր. Է.	Սանսկրիտ ուր. Է.	Հն. հայ. ուր. Է.	Հայերեն, ուր. Կ.	Պարսկերեն, ուր. Է.	
արդի	արդու	portio	prithuka	—	parius	—	—
արի	արի	pariliu	—	—	—	—	—
արի	արի	urg'hi	ʔli	archia	—	—	—
ուր	ուր	pālo	—	pā'los	pulius	—	—
ուր	ուր	ole'n	—	ole'n	ulina	—	—
իւր	իւր	ghesma	ghama	tesmas	lorius	—	—
ուր	ուր	k'awa	kōka	kāuax	—	sarā	—
ուր	ուր	k'ena	—	kāuax	—	—	—
ուր	ուր	k'ien,	—	kāuax	—	—	—
—	—	k'iyōn'	—	—	—	—	—
ար	ար	k'erd	ir'd	kēr, kardis	cor, cordis	ceprae	ի՛Ք. lirdis
ար	ար	pādo	—	pā'los	—	—	—
ար	ար	daivēr'	dēvar	dāe'r	—	deveri	—
ար	ար	diw	—	dias	dus	—	—
ար	ար	pāku	—	pāulus	pāucus	—	—
ար	ար	skāwu	skāul	sky'los	—	—	—
ար	ար	swopnu	—	hypnos	somnus	sūnū	—
ար	ար	ang'hi	—	anguts	—	—	ի՛Ք. angis
ար	ար	aulo	—	aulan	alvus	ulī-ze	aulla

2. Ինքնակապ. Ե. Ինքնակապ (հայերեն հայերեն)

բանական որևէ արժեք չի ստանում, բացի այն, որ դառնում է հոլովման հիմք. օրինակ՝ սանսկրիտի kanya¹ բառը հոլովման ընթացքում իր ուղղականի «ա» ձայնավորը պահպանում է, ուստի քերականները այդպիսի դեպքում կոչում են «ա» հիմքի հոլովման բառ, մեկ ուրիշ բառ, որ ունի հիմքի «օ» ձայնավոր՝ «օ» հիմքի հոլովման բառ, մի երրորդը «ու» հիմքի հոլովման բառ և այլն:

Այդ «ա», «օ», «ու» և նման ձայնավորները ցույց են տալիս ուղղական ձևում բառի հիմքը, որ ձայնավորով է վերջանում: Այլ է հայերենի մեջ, որի ուղղականը կորցրել է հիմքի ձայնավորները և անգամ հիշողութունը նրանց մասին, ուստի երբ սեռականում երևում են նրանք, ավելանալով ուղղական ձևի վրա, ստանում են երկու նշանակություն: Առաջին նշանակությամբ նրանք ցույց են տալիս, որ բառը թեք ձևով է, այսինքն՝ ուղղական և հայցական չէ: Երկրորդ նշանակությամբ նրանք ցույց են տալիս հոլովման տիպը:

Այսպես առաջանում է հոլովման մի սխեմա, որտեղ սեռականում երևացող ձայնավորը, որ ավելանում է ուղղական հիմքի վրա, դառնում է հոլովման տիպի ցուցանիշ կամ հոլովիչ: Այդ ձայնավորը չի գիտակցվում այլևս հիմքի հետ, այլ անկախանում է նրանից, վերցնում է իր վրա նոր, ինքնուրույն ֆունկցիա, վերածվում է քերականական նոր ձևույթի, վերածվում է հոլովիչի: Դրա հետևանքը հայերենի համար լինում է հակայական. առաջանում է հոլովման մի սխեմա, որի տիպերի արտահայտիչները դառնում են այն ձայնավորները, որոնք երբեմնի հնդեվրոպական հիմքի ձայնավորներ էին: Այդ նշանակում է, թե հայերենում հնդեվրոպական բառահիմքից պոկվում է նրա ձայնավորը և ստանում է մի նոր, առանձին, ինքնուրույն նշանակություն, հոլովիչի նշանակություն: Ահա դա մենք կոչում ենք առաջին իմաստավորման օրենք: Այդ առաջին իմաստավորման օրենքը վերախմբավորում է հնդեվրոպական բառի ձևաբանական կառուցվածքը և առաջացնում բառի կառուցվածքի նոր վիճակ: Այսպես, օրինակ, գետով, սրտի ձևերի մեջ հնդեվրոպական վիճակում մենք գիտակցում էինք երկու մորֆեմ՝ սրտի + ւ, գետ + ւ: Հայերեն լեզվի մեջ առաջին իմաստավորման օրենքի հետևանքով բառաձևում առաջանում են երեք մորֆեմ՝ առաջինն է բառահիմքը, օրինակ՝ սրտ-, գետ. երկրորդն է հոլովիչը՝ օրինակ՝ ի, ո, երրորդն է ռոլովովկազմիչը՝ օրինակ՝ ռ, վ (սրտ + ի + ռ գետ + ո + վ):

Դրա հետևանքով առաջանում է ահա գրաբարի հոլովման կոռոմշակված և հետևողական սխեմա:

Առաջին իմաստավորման օրենքը գործել է սկսել համարյա այն վայրկյանից, երբ հնդեվրոպական նախալեզվի հայերեն դառնալու պրոցեսում բառի վերջին վանկն ընկել է. այսինքն՝ առնվազն երեք հազարամյակ առաջ մեր դարաշրջանից: Հեղաշրջելով հնդեվրոպական վիճակը՝ առաջին իմաստավորման օրենքը փոխել է հնդեվրոպական լեզվատիպը և վերածել այդ լեզվատիպը գրաբարի այն դարմանալի մշակված վիճակի, որը նկարագրեցինք մենք սկզբում:

Առաջին իմաստավորման օրենքը գիտակցել է տալիս այն հանգամանքը, որ հայերենի ա, ե, ի, ո, ու ձայնավորները, թեք հոլովներում

¹ Երիտասարդ աղջիկ:

երևալիս, հոլովիչի են վերածվում, այսինքն՝ դառնում են հոլովման տիպի նշան։ Այդ գիտակցման հետևանքով հնդեվրոպական լեզվի մեջ գոյություն ունեցող ձայնդարձի (alternance, ablaut) օրենքը վերախմբավորվում է իրեն հայերեն լեզվի հոլովման ներքին թերման օրենք։

Այսպես՝ աուն-աւան, տամբ ձևերի մեջ «ա» ձայնդարձը դառնում է թերման նշան, բայց որովհետև նա գտնվում է բառի ներսում, ուստի նա ձևավորում է ներքին թերման։ Ինչպես արդեն գիտենք, հայերեն լեզվի սեռականում պահպանված է հնդեվրոպական լեզվի ուղղական ձևը. այսպես, օրինակ, աստղ բառի աստեղ ձևը համապատասխանում է հնդեվրոպական stel ձևին կամ հունարեն ուղղական aster կամ յատիններեն ուղղական stella ձևերին։ Հունարեն, յատիններեն և այլ լեզուների մեջ բառարմատում գտնված «e» ձայնավորը ձևարանական արժեք չի ներկայացնում, մինչդեռ հայերեն լեզվի մեջ այդ նույն աստեղ ձևը սեռական է և տարբերվում է ուղղական աստղ ձևից նրանով, որ ունի «ե» ձայնավորը, ուստի այդ «ե» ձայնավորը դառնում է թերման ցուցիչ, այսինքն՝ ներքին թերման հոլովիչ։

Այդ հանգամանքը դառնում է հիմք և գոյություն իմաստ տալիս հայերենի մեջ ներքին թերման առաջանալուն։

Այս նույն եղանակով հնդեվրոպական ուղղական, բայց հայերեն սեռական աուն, քեռ, ալիւր և նման ձևեր իմաստավորվում են որպես ներքին թերման ձևեր։ Ուրեմն՝ առաջին իմաստավորման ներքին օրենքը առաջացնում է հայերենի մեջ ներքին թերման, իսկ այն հոլովումը, որ առաջացել էր բառից գուրս երևադող հոլովիչով, գիտակցվում է որպես արտաքին թերման։ Այսպիսով, առաջին իմաստավորման օրենքը հայերեն լեզվի մեջ առաջացնում է հոլովման հետևողական սխեմա, որը չի նմանում է ներքին թերման և արտաքին թերման։ Իսկ այդ սխեմայի առաջացումը միանգամայն վերախմբվում է հնդեվրոպական անունների մեղ ծանոթ ջերականական նախատիպը հայերենում, առաջացնում գրաբարի հոլովման հոյակապ կերպարը։

Դանի որ թերման ձևերում երևացող ձայնավորները դառնում են թերման նշաններ, ապա հնդեվրոպական e, o գրո ձայնդարձը, որ հնդեվրոպական նախադասական մեջ ձևարանական արժեք չունի, առաջին իմաստավորման ներքին օրենքով ձևարանական իմաստ է ստանում հայերենում։ Ե, ու, ա, ի, ու ձայնավորները դառնում են թերման ցուցանիշներ, այսինքն՝ հոլովիչներ։ Այսպես՝ անձն-ասձին-անձամբ¹ (ի-ա) բառի մեջ երևում է գրո-ի-ա ձայնդարձը, որը դառնում է ներքին թերման ի-ա խառը հոլովման նշան, ալի, ալույ, ալիւս, ձևերի մեջ գրո-ո-ա ձայնդարձը դառնում է հոլովման ցուցիչ, որից առաջանում է ո-ա խառը տիպի հոլովում։ Նույն ձևով առաջանում են ու-ա, ե-ի խառը տիպի հոլովումները։ Այսպիսով, առաջին իմաստավորման ներքին օրենքը գոյացնում է հայերենում և՛ պարզ տիպի, և՛ խառը տիպի հոլովում։

Ինչպես ասեսում ենք, մեր վերևում նկարագրած պատկերը, որ ներկայացնում էր գրաբար լեզվի անվանական հոլովման կատարյալ սխեման, առաջացել է մեկ օրենքով, այն է՝ լուսանկարի ձայնավորի առաջին իմաստավորման օրենքով։

Այդ օրենքը, գործելով երկաղ ժամանակ, մշակման է ենթարկել

¹ Տե՛ս A. Meillet, Esquisse d'une grammaire comparee de l'armenien classique, 1903. Տեղեկագիր 8-3

հնդեվրոպական նախալեզվից ճյուղավորված այն լեզուն, որ այժմ կոչվում է հայերեն: Գործել է այդ օրենքը այդ լեզվի մեջ անշեղ, տարածվել, բռնել այդ լեզվի անվանական հոլովման ենթակա բոլոր բառերը: Այդ օրենքը տեղի չի տվել որևէ ազդեցության դրսից և որևէ ազդեցության ներսից, ունեցել է դարմանալի դիմագրական կարողություն, դարձել է հայերենի լեզվամտածողության աննահանջ և պողպատյա օրենքը և հայ գիտակցության մեջ մշակել է մի անթերի սխտեմ, որ մենք սովորաբար կոչում ենք գրաբարի հոլովման սխտեմ:

Այդ օրենքը եղել է այնքան հզոր և այնքան գործուն, որ պահպանվել է մինչև 5-րդ դարը: Նա գործել է այն ժամանակ, երբ հայերենի վրա ազդել է խեթերեն լեզուն, որովհետև այդ լեզվից փոխառնված մի քանի բառերը ենթարկվում էին այդ օրենքներին: Նա գործել է այն ժամանակ, երբ մեր դարաշրջանից շատ վաղ ժամանակներում հայերենի վրա ազդել են կովկասյան լեզուները, որովհետև կովկասյաններից փոխառնված բոլոր բառերը ենթարկվել են այդ օրենքին:

Նա գործել է նաև այն ժամանակ, երբ հայերեն լեզուն ենթարկվել է պարսկերենի ուժեղ բառական ազդեցության, կարելի է ասել՝ պարսկերենի բառական ոչ թե ազդեցության, այլ իսկական ուժեղացման. և հայերեն լեզուն դիմացել է այդ ուժեղացմանը, որովհետև պարսկերենի բոլոր բառերն էլ ենթարկվել են այդ օրենքին:

Այսպես նաև հետագայում, մեր դարաշրջանին անմիջապես նախորդող և անմիջապես հաջորդող դարերին, երբ հայերենի վրա ազդել են հունարենը, ասորերենը, միջին պարսկերենը և այլն:

Բոլոր բառերը, որոնք հայերենը վերցրել է այդ լեզուներից, ենթարկվել է իր առաջին իմաստավորման ներքին օրենքին, քուրայի պես թրծել է դրանք և վերածել իսկական հայերեն բառերի:

Այդ օրենքի դիմագրական հակայական ուժը ցույց է տալիս, որ այդ լեզվով խոսող հասարակությունը զարմանալի կերպով համակված էր իր լեզվի գիտակցությամբ և իր քերականության կառուցվածքի մեջ այլ լեզուներին որևէ դիմում չէր կատարում: Եվ որովհետև դրանով կառուցվածքի սխտեմը կամ քերականությունը պահպանվում էր, պահպանվում էր նաև լեզուն:

Դրանով է բացատրվում այն գաղտնիքը, թե ինչու հայերեն լեզուն այդ սխտեմի դարգացման մեջ ամենահետևողականն է հնդեվրոպական բոլոր լեզուներից: Մարքսիստական լեզվաբանությունն ասում է. «Լեզվի գիմաղկունությունը բացատրվում է նրա քերականական կառուցվածքի և բառային հիմնական ֆոնդի գիմաղկունությամբ»¹:

Այդ ճշմարտության ապացույցը տեսնում ենք մենք հենց հայերեն լեզվի օրինակով:

Դրաբարի հոլովական սխտեմը, մեր կարծիքով, կազմավորվել է սկսել երրորդ հազարամյակում մեր դարաշրջանից առաջ և, հավանական է, երկրորդ հազարամյակի վերջերին, երբ հայերը գտնվում էին Փոքր Ասիայում, Փոքր Հայքում, արդեն կազմավորված էր: Այդ ժամանակվանից նա իր գոյությունը պահպանեց իրրև մի ինքնուրույն սխտեմ մինչև 5-րդ դարը:

¹ Ի. Վ. Սալին, Մաքսիզմը և լեզվաբանության հարցերը, 1952, էջ 52:

Այդ 18 դարերի միջև ընկած են բոլոր այն դեպքերը, որոնք կապված են պատմական Հայաստանի, իրրե հայերի հայրենիքի, առաջացման հետ։ Այսինքն՝ Փոքր Հայքից հայերը մի զգալի մասով տարածվել են Հայաստանում աստիճանաբար, տեղացիներին ձուլել են իրենց մեջ լեզվայնորեն սոմատիկ կերպով, ցեղայնորեն և կուլտուրականորեն։ Միաժամանակ իրենք բազմացել են նաև նրանց հաշվին, բայց և ընդունել են այդ ներձուլվողների կուլտուրան, կենցաղը, գիտելիքները և այլն, ինչպես նաև հարստացրել են իրենց բառային կազմը հսկայական քանակությամբ բառերով, որոնցով կամ արտահայտել են ավելի զարգացած կուլտուրա, քան հայ ցեղերն ունեին, և կամ այնպիսի իդեոներ, որոնք կապված էին տեղի պայմանների և կենցաղի հետ։ Ներձուլվող ցեղերը, սակայն, չեն ազդել ոչ մի կերպ հայերենի քերականական կառուցվածքի և բառային հիմնական ֆոնդի վրա, որովհետև այժմ մենք տեսնում ենք, իրրե հետևանք, որ հայերենը պահպանել է իր քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը և դուրս է եկել հաղթող երկարատև մրցությունից, մինչդեռ ներձուլվող ցեղերը կորցրել են իրենց լեզուների բառային հիմնական ֆոնդը և քերականական կառուցվածքը և, ուրեմն, պարտվել են հայերենի հետ ունեցած դարավոր մրցության պրոցեսում։

Նրանք, սակայն, կորցնելով իրենց լեզուն, այսինքն՝ իրենց լեզվի քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը, յուրացրել են հայերենի քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը։

Յուրացման պրոցեսում ցեղերից մի քանիսը փոփոխություն են մտցրել հայերենի հնչյունական կազմության մեջ, նաև բառային կազմության մեջ, որովհետև իրենց ցեղական բառերից պահպանել են որոշ քանակություն։ Դրա հետևանքով առաջացել են հայերեն հին բարբառները։ Հայերենի քերականական կառուցվածքը յուրացնելու ընթացքում նրանք, այդ ցեղերն, այդ կառուցվածքին իրենց մեծած լեզուներից նոր բան չեն ավելացրել, բայց նրա սխառմի մեջ մտցրել են մի փոփոխություն, նրանք անվստահան հոլովման սխառմի մեջ գիտակցել են ոչ թե երեք, այլ երկու կատեգորիա՝ հիմք և վերջավորություն։ Երևի այդպես էր իրենց լեզուներում։ Գիտակցված այդ հիմքը ուղղական ձևն է, իսկ վերջավորությունը բաղկացած է հայերենի հոլովից և հոլովակազմից։ Օրինակ՝ գետով բառի մեջ դրարարի գետ + ո + վ երեք ձևայինների փոխարեն գիտակցել են գետ + ով երկու ձևայինները. այսինքն՝ նրանք հոլովման տիպը ըմբռնելու անհրաժեշտությունը չեն գիտակցել, որովհետև չեն ունեցել այն տրագիցիան, որ հայերը ժառանգել էին հնդեվրոպական վիճակից, նրանք գիտակցել են միայն հոլովը, այսինքն՝ հիմքը և վերջավորությունը։

Եվ նրանք ուրիշ կերպ էլ վարվել չէին կարող, որովհետև դրարարի ուղիղ ձևը ոչ մի հիմնավորում չէր տալիս հոլովման տիպերին. օրինակ՝ դրարար նետ, գետ և զարդ բառերը իրենց ձևի մեջ չունեն որևէ տվյալ, որ հաստատեր, թե նետ բառը պատկանում է «ի» հոլովման, գետ բառը պատկանում է «ո» հոլովման, իսկ զարդ բառը պատկանում է «ու» հոլովման։ Այդ բառերի տարբեր հոլովման պատկանելու գիտակցումը կարող է լինել միայն ավանդական, բայց ոչ ձևաբերական, ճիշտ այնպես, ինչպես հայի համար միևնույն է ասել мой книга, թե моя книга, որովհետև այդ ամենի տակ նա հասկանում է «իմ գիրքը» իմաստը։ Հայն անտարբեր է

ոուսերին ԿНИГА բառի «ձ» ձայնավորի նկատմամբ, որը տվյալ գոյականի սեռն է արտահայտում և որը նրա, հայի, լեզվական ավանդականության մեջ բացակայում է։ Այդ պատճառով էլ նա անտարբեր է դառնում սեռացույց վերջավորությունների նկատմամբ, ուստի սեռերը նրա համար գոյություն չունեն, մինչդեռ ոուսն անսեռ գոյական չի կարողանում պատկերացնել։ Նրա, ոուս լեզվի ավանդականությունն է այդ։ Ահա այդ պատճառով մեր բարբառների ճյուղավորման (գոյացման) պրոցեսում առաջանում է մի նոր օրենք, այն է՝ գիտակցել բառի հիմքը և հոլովակազմիչը, այսինքն՝ գիտակցել, որ ամեն մի անուն պետք է ունենա հիմք, որ է ուղղական ձևը, և ամեն մի հոլովի համար՝ մեկ վերջավորություն։ Դրա հետևանքով գրարարի հոլովումը միանում է հոլովակազմիչին, դրանք միասին առնվում են իրեն հոլովական վերջավորություն։ Այդ օրենքը մենք կոչում ենք երկրորդ իմաստավորման օրենք։ Այդ երկրորդ իմաստավորման օրենքի ներգործությամբ բացառականի վերջավորությունը դառնում է մեզ մոտ «ից», արևմտահայերի մոտ՝ «է», գործիականի համար՝ «ով» ներգոյականի համար «ում»։ Ինչպես տեսնում ենք, այդ վերջավորությունների առաջին բաղադրիչները ի, ո, ու գրարար լեզվի հոլովիչներն են, որոնք այստեղ կորցրել են իրենց հոլովիչ լինելու գաղափարը, դարձել են վերջավորության մասնիկներ, այսինքն՝ նրանք լեզվի մեջ ունեցել են երկրորդ իմաստավորում, այն է, հոլովակազմիչի հետ միանալ և միասին արտահայտել հոլովի գաղափար։ Այսպիսով հայերենի անվանական հոլովման դարգացումը ստանում է հետևյալ բնթացքը.

Հնդեվրոպական վիճակ՝ vedo + bis.

գրարար վիճակ՝ գետ + ու + վ.

բարբառների կամ ժամանակակից լեզվի վիճակ՝ գետ + ու + վ.

Այսպիսով՝ գրարար փուլն առաջացել է սուաջին իմաստավորման օրենքով, իսկ այս վերջին փուլը՝ բարբառների կամ մեր ժամանակակից լեզվի փուլը, առաջացել է երկրորդ իմաստավորման ներքին օրենքով։

Ինչպես առաջին իմաստավորման օրենքը հեղաշրջեց հնդեվրոպական լեզուն և վերածեց նրան գրարարի տիպի, այնպես էլ երկրորդ իմաստավորման օրենքը թափանցեց հայերեն լեզվի բոլոր անկյունները և հեղաշրջեց նրան՝ գրարար վիճակից վերածելով բարբառային և աշխարհարար վիճակի։ Եթե սուաջին իմաստավորման օրենքը առաջացրեց ներքին և արտաքին թեքում, պարզ և խառը հոլովում, ապա երկրորդ իմաստավորման օրենքը մսնացրեց ներքին և արտաքին թեքումները, մահացրեց պարզ և խառը հոլովումները և առաջացրեց հոլովման կցական տիպ, այսինքն՝ ամեն մի հոլովի համար հոլովական մեկ նշան և այն էլ բոլոր բառերի համար նույնսը։ Երկրորդ իմաստավորման օրենքը մահացրեց նաև գրարարի հոգնակի հոլովումը և հայերենի հոգնակի հոլովումը նույնացրեց եզակի հոլովման հետ. օրինակ՝ գետ + ից, գետ + ու, գետ + ում, գետեր + ից, գետեր + ու, գետեր + ում։

Իհարկե, թե հոլովակազմիչների և թե այլ կատեգորիաների ծագման հարցը կարևոր պրոբլեմներից է, բայց մենք չենք շոշափում այդ, քանի որ մեր նյութից դուրս է այդ. մեր նպատակն էր ցույց տալ հայերենի հոլովական դարգացման ներքին երկու օրենքները միայն։

Ինչպես տեսնում ենք, հայերենի դարգացման երկու ներքին օրենքները գործել են մեր լեզվի մեջ երկարատև առաջին օրենքը գործել է շուրջ երկու հազար տարի և հնդեվրոպական վիճակից հայերենը վերածել է գրարարի կատարյալ տիպի թեքական և բարձր դարգացման հասած, բայց խիստ ծանր և բարդ սիստեմի, իսկ երկրորդ օրենքը գործելով շուրջ 2500 տարի, մեռցրել է թեքական սիստեմը հայերենում և դարգացրել բարբառների և աշխարհարարի ավելի պարզ ու թեթև սիստեմը, առանց բարդությունների:

Այդ երկրորդ իմաստավորման օրենքը ամրոգջապես փոխարինել է առաջին իմաստավորման օրենքին, որը մահացած է իրրե սիստեմ և որից մնացել են կտորտանքներ, նման ճենամանի այն կտորներին, որոնք փայլում են, գեղեցիկ են, իրենց վրա ունեն արվեստի բարձր հետքեր, բայց որոնք հին խեցամանների կտորտանքներ են, որ այժմ ոչ ոքի պետք չեն, բայց հնագետներից, որոնք նրանց օգնությամբ վերականգնում են նախնիքների արվեստը: Այժմ էլ մեր լեզվի մեջ գործում է երկրորդ իմաստավորման օրենքն ուժեղ, ներգործուն կերպով և տանում է մեր ընդհանուր լեզուն դեպի է՛լ ավելի մեծ պարզեցման, մշակման ու բարձր դարգացման: Առաջին և երկրորդ իմաստավորման օրենքները բացատրում են հայերենի անվանական հոլովման պատմությունն ու արդի վիճակը, և վկայում, որ հայերենի քերականական կառուցվածքը կարող էր առաջանալ միայն ու միմիայն հնդեվրոպական տիպի նախավիճակից և ուրիշ ոչ մի այլ տեղից: